

Մրցույթների , աճուրդների կազմակերպումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը

Մրցույթներն անցկացվում են բաց , մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ:

Մրցույթները կազմակերպում և անցկացնում են մրցութային հանձնաժողովները:

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1. Հայտ

2. Մասնակցության համար վճարի անդորրագիր

3.Անձնագիր

Մրցույթի մասնակիցները մրցութին մասնակցելու համար դրա անցկացման մասին ծանուցման մեջ նշված չափով մուծում են նախավճար, որի գումարը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի նախնական գնի 5 տոկոսը:

Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:

Եթե մասնակիցը մրցութում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:

Մրցութում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

Մրցութին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են.

1. Հայտ

2. Մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր

3. Անձնագիր

Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը սույն օրենսգրքով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:

Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան:

Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վճարի գնի մեջ: